**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ**

**ՊԱՏԳԱՄԱՎՈՐ**

**N _____**

***— ---------- 2025թ.***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ,
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ ՀԱԿՈԲ ԱՐՇԱԿՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Արշակյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 109-րդ հոդվածով, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 65-րդ և 67-րդ հոդվածներով՝ օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ ենք ներկայացնում ««Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն՝ սույն գրությանը կցվում են.

1) օրենքի նախագիծը (հիմնական զեկուցող՝ Ռուբեն Ռուբինյան).

2) օրենքի նախագծի ընդունման հիմնավորումը.

3) գործող օրենքի լրացվող հոդվածի վերաբերյալ տեղեկանքը:

Խնդրում ենք օրենքի նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

**Հարգանքով՝ Ռուբեն Ռուբինյան**

**Հարգանքով՝ Գեղամ Նազարյան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՕՐԵՆՔԸ

### «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» 2001 թվականի հունիսի 24-ի ՀՕ-200 օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.2-րդ հոդվածով.

*«Հոդված 1.2. Հիշատակի և խոնարհումի օր՝ նշվում է հունվարի 27-ին, ոչ աշխատանքային օր:»:*

***Հոդված 2.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## ««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

**1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը**

«Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքում չկա հատուկ օր, որը նվիրված է բոլոր ժամանակների ռազմական գործողությունների ընթացքում զոհված զինծառայողների և այլ անձանց հիշատակը հարգելուն և մեծարելուն: Հետևաբար մարդիկ զոհվածների հիշատակը հարգում են կա՛մ տարբեր ռազմական իրադարձությունների նշման, կա՛մ հունվարի 28–ին՝ Բանակի օրը, որն ավելի շատ տոնական օր է, քան հիշատակի:

Հիշատակի և խոնարհումի օր սահմանելու շնորհիվ Բանակի օրվան՝ հունվարի 28–ին նախորդող օրը՝ հունվարի 27–ը, կդառնա օր, երբ կհարգեն բոլոր ժամանակների ռազմական գործողությունների ժամանակ զոհվածների հիշատակը և կխոնարհվեն հայրենիքի համար ընկածների հիշատակի առջև:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» 2001 թվականի հունիսի 24-ի ՀՕ-200 օրենքում լրացում կատարել և սահմանել Հիշատակի և խոնարհումի օր՝ ոչ աշխատանքային:

**2. Առաջարկվող կարգավորման բնույթը**

Նախագծով նախատեսվում է վերանայել «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» 2001 թվականի հունիսի 24-ի ՀՕ-200 օրենքը և հունվարի 27-ը սահմանել որպես Հիշատակի և խոնարհումի օր՝ ոչ աշխատանքային:

**3. Ակնկալվող արդյունքը**

Նախագծի ընդունմամբ հունվարի 27-ը ՀՀ-ում պաշտոնապես կնշվի որպես Հիշատակի և խոնարհումի օր, կստեղծվեն իրավական հիմքեր բոլոր ժամանակների ռազմական գործողությունների ընթացքում զոհվածների հիշատակը հարգելու և հայրենիքի համար ընկածների հիշատակի առջև խոնարհվելու ուղղությամբ միջոցառումներ ու ծրագրեր մշակելու և իրականացնելու, այդ նպատակով պետական և հասարակական հատվածի համագործակցությունը, ինչպես նաև հանրային կրթության ծրագրերը խթանելու համար:

Տեղեկանք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐԻ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Ամանոր և Ծննդյան տոներ՝ նշվում են դեկտեմբերի 31-ից հունվարի 2-ը ներառյալ (Ամանոր) և հունվարի 6-ին (Սուրբ Ծնունդ և Հայտնություն), ոչ աշխատանքային օրեր:
***(1-ին հոդվածը խմբ. 10.12.09 ՀՕ-221-Ն, 17.11.21 ՀՕ-362-Ն)***

**Հոդված 1.1.**
***(հոդվածն ուժը կորցրել է 17.11.21 ՀՕ-362-Ն)***

Հոդված 1.2. Հիշատակի և խոնարհումի օր՝ նշվում է հունվարի 27-ին, ոչ աշխատանքային օր: